

Դիանա Հայրոյան
ԵՊՀ

**ԿԵՐՊԱՓՈԽՎՈՂ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՐԱՐԱԾՆԵՐՆ
ՈՒ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ ՋՈՐՋ ՄԱԿՂՈՆԱԼՂԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ
ԱՇԽԱՐՀՈՒՄ**

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում ուսումնասիրել կերպավորվող առեղծվածային էակներն ու կենդանիները Ջորջ Մակղոնալղի հեքիաթներում: Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տարօրինակ և հանելուկային արարածների կիրառությունը հեքիաթներում հեքիաթին օժտում է վառ և ուժեղ պատկերներով ու խորհրդանիշներով: Աշխատանքում տեղ գտած վերլուծությունը, որը ներկայացնում է կենդանիների և առեղծվածային արարածների հնարավոր մեկնաբանությունը նպաստում է խորհրդանիշների ճիշտ ընկալմանը և նոր մեկնաբանությունների առիթ է տալիս:

Հիմնաբառեր: Ջորջ Մակղոնալղ, հեքիաթ, կերպավորվածություն, գոբլին, առեղծվածային արարածներ:

Կենդանիներն ու առեղծվածային անբնական արարածները Ջ. Մակղոնալղի ֆանտաստիկ աշխարհի ամենաբնորոշ տարրերն են: Ընթերցողներից յուրաքանչյուրը կարող է տպավորվել դրանցով, նրանց արտասովոր, առեղծվածային հատկանիշներով: Այս շարքին են դասվում «Ոսկե

բանալին» հեքիաթը իր փետրավոր ձկներով, «Արքայադուստրը և Գոբլինը», ինչպես նաև «Արքայադուստրը և Քրդին» հեքիաթները անճոռնի հրեշներով և առեղծվածային կերպափոխություններով լի «Հյուսիսային քամու հետևում» հեքիաթը:

Անհրաժեշտ է նշել, որ կենդանիները առհասարակ կարևոր դեր են խաղում ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ: Ամեննին էլ զարմանալի չէ, թե ինչպես են կենդանիներն ու մարդիկ գոյատևել կողք կողքի վաղ անցյալում: Պարզագույն մշակույթներում հավատում էին, որ մարդն ու կենդանին միևնույն էությունն ունեն: Այսպես օրինակ, Հին Եգիպտոսում աստվածները հանդես էին գալիս կենդանիների տեսքով: Անտիկ միջերը նույնպես լի են կենդանիներով ու հրեշներով, ինչպես օրինակ Ջևսի հայտնվելը ցուլի կերպարանքով: (Ackermann 1991: 48-64) Միջին դարերում քրիստոնեության հետևորդները կենդանական աշխարհը կապում էին հոգևորին. տարբեր կենդանիներ՝ առյուծը, գառը, ձուկը, ընկավվում էին որպես Քրիստոսի խորհրդանիշ (Lurker 1988, 67-68):

Միջերում և գրականության մեջ հանդիպող կենդանիների հետ մեկտեղ չմոռանաք նշել իրական կյանքում առկա կենդանիներին: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում կենդանիներն իրենց ուրույն գործառույթն ու նշանակությունն են ունեցել: Այս առումով Վիկտորիանական ժամանակշրջանի հեքիաթը ևս լի է կենդանիներով և կենդանանման

արարածներով: Դրա վառ ապացույցն են այս դարաշրջանի գրող Ջ. Մակդոնալդի հեքիաթները: «Արքայադուստրը և գոբլինը» հեքիաթը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում այս շարքում իր անճոռնի և աննկարագրելի արարածներով՝ գոբլիններով: Այս հեքիաթում արքայադուստր Այրինի տատիկի կերպարը Մակդոնալդի հեքիաթի աշխարհում հայտնի մոր կերպարն է, ով ստանձնում է պաշտպանի և առաջնորդի դերը: Բայց նա միայնակ չէ. նրան ունեղկցում են ճախարակն ու աղավնիները: Խոսքը փետրավոր արարածների մասին է: Անհիշելի ժամանակներից թռչունի թևերը ոչ միայն համարվել են աստվածային հատկանիշ, այլ նաև աստծո սուրհանդակի դեր են կատարել: Այս հեքիաթում եվս թռչունները հավատարիմ սուրհանդակների դեր են կատարում՝ իրենց տիրուհուն կապելով արտաքին աշխարհին: Մեծ հետաքրքրություն ու սարսափ է ներշնչում առեղծվածային արարածների՝ գոբլինների պատկերավոր նկարագրությունը, որը բազմաթիվ խորհրդանշային մեկնաբանությունների տեղիք է տալիս՝ չսպառելով իմաստների բազմազանությունը: Դրանց իմաստը ընկալելու համար կարելի է միայն պատկերացնել, թե ինչպես են Մակդոնալդի երևակայության մեջ առաջին անգամ ծագել այս կերպարները: Հնարավոր է բացահայտել դրանց նշանակությունը, սակայն ընթերցողը պետք է հաշվի առնի իմաստային մի քանի մակարդակ: Արքայադուստր Այրինի մեծ տատիկը իր աղավնիների հետ միասին անկասկած առանցքային կերպար է թե՛ «Արքայադուստրը և գոբլինը» և

թե՛ «Արքայադուստրը և Քրդին» հեքիաթներում: Նրա կերպարը սերտորեն զուգորդվում է սիրո, իմաստության և ներդաշնակության հետ: Հակադիր կերպարներ են գոբլիններն իրենց ընտանի կենդանիներով, որոնք խորհրդանշում են ատելություն և աններդաշնակություն: Առաջին «Արքայադուստրն ու գոբլինը» հեքիաթում անճոռնի արարածները հանդիպում են միայն երեք կարճ էպիզոդներում և հեքիաթին պատկերավորություն հաղորդելուց բացի որևիցե այլ գործառույթ չեն կատարում: Այս հեքիաթում նրանք առանձնապես կարևոր չեն, սակայն հեքիաթի շարունակությունը կազմող «Արքայադուստրը և Քրդին» հեքիաթում նրանց դերակատարությունը մեծ թափ է ստանում: Այս խառնածին արարածները իրենց արտաքինով բոլոր կանոններից և երևույթների սահմաններից դուրս են: Նրանց արտաքինում բոլոր տեսակի կենդանիներից էլ ինչ-որ բան կա: Մարմնի ձևն անգամ աններդաշնակություն, քմահաճություն ու քառս է խորհրդանշում: Իսկ արձակած հրնչուններն ականջի համար խիստ տհաճ են ու բացասական.

For the noises they made..... could be described neither as grunts nor squeaks nor roars nor howls nor barks nor yells nor screams nor croaks nor hisses nor mews nor shrieks, but only as something like all of them mingled in one horrible dissonance. (71).

Այստեղ նկատելի է դառնում Ջ. Մակդոնալդի որդեգրած ավանդական թեման, որին անդրադառնում է բավականին յուրատիպ կերպով: Դասական դիցաբանության հրեշները

հաճախ խառնածին են: Գոբլինները ամենևին էլ նման չեն սովորական հրեշների, ինչպես վիշապը կամ հարպիաները (կնոջ գլխով գիշատիչ թռչուն) և նրանք բնավ էլ նման չեն անցյալի իրական հրեշների: Գոբլինները հավանաբար, հեղինակի անհատական, պատկերավոր երևակայության արդյունք են: Գոբլինների արտաքին նկարագրությունը հեքիաթում աղետային և սպառնալիքի տրամադրություն է ստեղծում: «Արքայադուստրը և Գոբլինը» հեքիաթում հրեշներին՝ գոբլիններին, սովորաբար հանդիպում ենք որպես մի հրոսակախումբ: Հաջորդող հեքիաթում գոբլինների նկատմամբ եղած վախն ու սարսափը անհետանում է, երբ Մակդոնալդը ընտրում է այդ արարածներից մեկին որպես ուղեկից ու պաշտպան: Այդ գոբլինը Լինան է՝ կարճիկ մարմնով, երկար ու հաստիկ պոչով ու ատամներով, որոնք սառցալեզվակներ են հիշեցնում: Առաջին գրքում գոբլինները այլասերման արդյունք էին ու անբնականի ներկայացուցիչներ: Երկրորդ գրքում Մակդոնալդը ցույց է տալիս, որ այլասերվելուց ու տձևանալուց առաջ իրականում նրանք մարդ արարածներ են եղել.

“I believe” , - says Curdie to the Princess, “from what your garndmother told me, that Lina is a woman, and that she was naughty, but is now growing good.

(277-78)

Ակնհայտորեն, հակասությունը նրանց արտաքինի և ներքինի միջև է: Լինան դառնում է գրքի պարադոքսի խորհրդանիշը: Այրինի տատիկը և բուլորը լավ են վերաբե-

րում նրան, սակայն անհրաժեշտության դեպքում պատրաստ են նաև ուժը գործի դնելու: Նա ով ցանկանում է նվաճել, չի կարող զիջող ու մեղմ լինել: Քրդիի հակումը որսորդության նկատմամբ մի կողմից հանդիմանության է հանդիպում, մյուս կողմից խրախուսվում է արքայադստեր տատիկի կողմից: Երբ տղան աղավնուն կրակելուց հետո զոջման զգացումով լի ցանկանում է այրել իր զենքը, արքայադուստր Այրիհի տատիկը թույլ չի տալիս.

“No, no Curdie. Keep them, and practice with them every day, and grow a good shot. There are plenty of bad things that want killing (191).

Վճռական մարտի ժամանակ նույնիսկ նրա քնքուշ աղավնիներն են վերածվում մարտիկների, այս տեսարանը իրոք հուզական առումով մեծ ոգևորություն կարող է առաջացնել ընթերցողի մոտ:

Down swooped the birds upon the invaders; right in the face of man and horse they flew with swift beating wings, blinding eyes and confounding brain.... So mingled the feathered multitude in the grim game of war. It was a storm in which the wind was birds; and the sea men. (334)

Արքայադուստր Այրիհի տատիկը Քրդիին շնորհում է մարդկանց մեջ թաքնված գազանին ճանաչելու շնորհով: Առանցքային է դառնում մարդ-գազան փոխաբերությունը.

“Have you ever heard what some philosophers say – that men were all animals once?”

“No maam.”...

“It is of no consequence. But there is another thing that is of greatest consequence-this: that all men, if they do not take care, go down the hill to the animals’ country; that many men are actually, all their lives, going to be beasts. People knew it once, but it is long since they forgot it” (219-20).

«Արքայադուստրը և Քրդին» հեքիաթում Մակդոնալդը ցանկանում էր ցույց տալ որ բարին նույպես պետք է կարողանա պայքարել և ուստի, դժվար է տարբերել չար մարդկանց բարի մարդկանցից: Հետաքրքիր է, որ ստեղծագործության վերջում Մակդոնալդը չգիտեր ինչ անել վրիժառունների կամ թագավորի չարանենգ խորհրդատուների հետ և հեքիաթի վերջում նրանք պարզապես անհետանում են:

Like hounds they (Uglies) rushed from the city, their burdens howling and raving. What became of them I have never heard.(338)

Ձ. Մակդոնալդի բոլոր ստեղծագործություններում կենդանին տարօրինակ գազան է: Այսպես հեղինակը առաջ է բերում մարդու և կենդանու կիսով չափ նույնացումը: Վերջինիս հիմքում ընկած է գազանի և մարդ արարածի միջև փոխհարաբերությունը: Այս միտքը արևմտյան մտածողության մեջ մեծ տարածում գտած գաղափարն է. մարդ արարածը հոգու և բնության հիբրիդ է՝ ծնված կենդանիների մեջ և ձգտումով դեպի աստվածայինը:

Հաջորդ կենդանին, որին անդրադառնում է Մակդոնալդը և կապում կնոջ կերպարի հետ գայլն է: Նշենք որ գայլի կերպարը կիրառվել է հեղինակների կողմից հազարավոր տարիներ: Երբեմն վաղ շրջանի լեգենդներում գայլին հանդիպում ենք որպես մոր կերպարի մի կոմից այն հանդես է գալիս կյանք պարզևողի դերում, մյուս կողմից՝ արնախում գազանի: Մի շարք հեքիաթներում երեխաներին հենց գայլն է մեծացնում: Նման հեքիաթների շարքին են դասվում Ռ. Քիփլինգի Մաուզլին: Այս պատմությունները արտացոլում են ուժեղ մայրական բնագոր, որը վերագրվում է գայլերին և դիտվում դրական լույսի ներքո: «Հյուսիսային քամու հետևում» հեքիաթում կերպափոխվող էակները կենդանիների ձևով հայտնվող մարդկային արարածներ չեն, այլ ծագում են ավանդական միջերից: Գլխավոր հերոս Դայմոնդի ուղեկիցը՝ հյուսիսային քամին, հանկարծակի և ի սարսափ իրեն հայտնվում է հսկա գայլի կերպարանքով: Նա չի ուտում փոքրիկներին, ինչից վախենում է Դայմոնդը, այլ այս կերպարանքն է ընդունում վախեցնելու հարբած դայակին:

“I had to make myself look like a bad thing before she could see me. If I had put on any other shape than a wolf's she would not have seen me, for that is what is growing to be her own shape inside of her” (37).

Այս դրվագում առաջին անգամ ենք հանդիպում վայրի գազանի կերպարին, որը բարոյախրատական գործառույթ է կատարում և փոխաբերական իմաստ է կրում: Այս կեր-

պափոխությամբ հյուսիսային քամին դաս է տալիս իր պարտականությունների մասին մոռացած դայակին:

Հյուսիսային քամու հաջորդ կերպափոխումները առավել հետաքրքիր են և հակասական: Մակդոնալդը ընտրում է կատվազգիներին՝ կատու, յագուար, ընձառյուծ, Բենգալյան վագր, հյուսիսային քամու հաջորդող կերպափոխությունների համար: Այս գիշատիչների ընտրությունը ևս պատահական չէ, քանի որ Մակդոնալդը կապում էր կատվազգիներին կնոջ էությանը ու նաև այսպիսով՝ գեղեցիկը սարսափելիին:

“... and the weasel grew and grew, till at once Diamond saw that weasel was not a weasel but a cat. And away went the cat, and Diamond after it. And when he had run half a mile, he found the cat waiting for him, sitting up and washing her face not to lose time. But the next time he came up with the cat, the cat was not a cat but a hunting leopard. And the hunting-leopard grew to a jaguar, all covered with spots like eyes. And the jaguar grew to a Bengal tiger and tiger flew over the snow in a straight line for the South, growing less and less to Diamond’s eyes till it was only a black speck upon the whiteness, and then it vanished altogether (130-131).

Այսպիսով թե՛ մարդկության մշակութային պատմության, թե՛ միֆերի և թե՛ գրականության մեջ կենդանին մրջտապես հակասական կերպով է հանդես գալիս: Կրելով

բազմաթիվ խորհրդանիշային իմաստներ վերջինիս ուսումնասիրությունը նպաստում է հեղինակի միտումի և հեքիաթի առավել խորը ընկալմանը:

References

1. Humphery, C. and Prichard, M. (1995) *The Oxford Companion of Children's Literature*, New York: OUP.
2. MacDonald, G. (1994) *At The Back of The North Wind*. Hertfordshire: Wordsworth Classics.
3. MacDonald, G. (1990) *The Princess and The Goblin and The Princess and Curdie*. New York: World Classics, OUP.
4. Prickett, S. (1979) *Victorian Fantasy*, Hassocks: Harvester.
5. Raeper, W. (1987) *George MacDonald*. Tring Lion.
6. Zipes, J (1985) *Classical Folklore Research Revisited // Children's Literature Association Quarterly*.

DIANA HAYROYAN – Metamorphosing Mystical Creatures and Animals in the World of George MacDonald’s Fairy Tales - *The following article deals with the study of mystical creatures and animalistic beings and their metamorphoses in the Scottish Victorian writer George MacDonald’s fairy tales. Through the analysis of a number of examples sorted out from Geoge Macdonald’s fairy tales it becomes clear that the abundant use of bizzare and enigmatic creatures enables the fairy tales with vivid and powerful images and symbols and make them open to various interpretations.*

Key words: *George MacDonald, fairy tale, metamorphosis, goblins, animalistic beings.*

ДИАНА АЙРОЯН – Метаморфозирующие мистические создания и животные в мире сказок Джорджа Макдональда - *Настоящая статья посвящена исследованию мистических созданий и животных, а также их метаморфозе в сказках шотландского викторианского писателя Джорджа Макдональда. Благодаря анализу ряда примеров, выбранных из сказок Джорджа Макдональда, становится ясно, что странные и загадочные существа выявляют особенности сказок, одаряя их яркими и сильными образами и символами, открывают их для различных интерпретаций.*

Ключевые слова: *Джордж Макдональд, сказка, метаморфоза, гоблины, мистические создания.*